

ՀՀ ԿԱՐԶԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հայցվոր՝

«Ժառանգություն» կուսակցություն

Գրանցման վկայականի համարը՝

03 Ա055722

Հասցեն՝ ք.Երեւան, Մոսկովյան 31/76ա

Հեռախոսահամարը՝ 010 53 69 13,

091 40 39 00

Պատասխանողներ՝

Հայաստանի Հանրապետության Նախագահ

Ռոբերտ Քոչարյան

Հասցեն՝ ք.Երեւան, Բաղրամյան պողոտա 26

Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն

Հասցեն՝ ք.Երեւան, Մելիք-Աղամյան 1

Հեռախոսահամարը՝ 010 59 53 04

Հայաստանի Հանրապետության

ոստիկանություն

Հասցեն՝ ք.Երեւան, Նալբանդյան 130

Հեռախոսահամարը՝ 010 53 43 02

Հայաստանի Հանրապետության

պաշտպանության նախարարություն

Հասցեն՝ ք.Երեւան, Գեւորգ Չաուշի 60

Հեռախոսահամարը՝ 010 28 26 30

Հայաստանի Հանրապետության ազգային

անվտանգության ծառայություն

Հասցեն՝ ք.Երեւան, Նալբանդյան 104

Հեռախոսահամարը՝ 010 58 35 15

13.03.2008թ.

Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ ՈՒ Մ

ՀՀ Նախագահի «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» 2008թ. մարտի 1-ի
Հրամանագրի 4-րդ կետի՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին,
Հրամանագրի 4-րդ կետի՝ 6-րդ եւ 7-րդ կետերը ոչ իրավաչափ ճանաչելու մասին, ինչպես նաեւ ՀՀ
ոստիկանությանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը եւ ՀՀ պաշտպանության
նախարարությանը որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու վերաբերյալ:

1. Հայցի էության հակիրճ նկարագրությունը

2008թ. մարտի 1-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով (այսուհետ՝ նաեւ Հրամանագիր) հայտարարվել է արտակարգ դրություն: Հրամանագրի 4-րդ կետի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ եւ 7-րդ կետերով նախատեսվել են մի շարք միջոցառումներ, որոնք ուղղակիորեն սահմանափակում են ՀՀ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական Կոնվենցիայով (այսուհետ՝ նաեւ Կոնվենցիա) եւ ՀՀ օրենքներով նախատեսված իրավունքներն ու ազատությունները:

Գտնելով, որ նշված սահմանափակումները չեն բխում ստեղծված իրավիճակից, հակասում են Սահմանադրությանը, Կոնվենցիային եւ օրենքներին, մենք վիճարկում ենք Հրամանագիրը եւ խնդրում այն անվավեր ճանաչել:

2. Փաստեր, որոնց վրա հիմնված են մեր պահանջները

2.1. 2008թ. փետրվարի 19-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններում ՀՀ ԿԸՀ-ի կողմից հաղթող է ճանաչվել նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը:

ԿԸՀ-ի կողմից Սերժ Սարգսյանին հաղթող ճանաչելը հանրահայտ փաստ է եւ այդ մասին զանգվածային լրատվության միջոցներով (այսուհետ՝ ՁԼՍ) բազմաթիվ հայտարարվել է:

2.2. Ընտրությունների պաշտոնական արդյունքների հետ համաձայն չլինելով՝ նախագահի թեկնածուներ Տիգրան Կարապետյանն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան:

Նշված փաստի առթիվ ՁԼՍ-ներով բազմաթիվ հրապարակումներ եղել են եւ դա հանրահայտ փաստ է:

2.3. Նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը տեւական նստացույց է իրականացրել Ազատության հրապարակում, ինչպես նաեւ՝ հանրահավաքներ ու խաղաղ երթեր:

Նշված փաստի առթիվ ՁԼՍ-ներով բազմաթիվ հրապարակումներ եղել են եւ դա հանրահայտ փաստ է:

2.4. ՁԼՍ-ներով 2008թ. մարտի 1-ին տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ այդ օրը առավոտյան ժամը 6.20-7.00-ի սահմաններում ոստիկանական ուժերի կողմից Ազատության հրապարակում նստացույցի մասնակիցները հատուկ միջոցների կիրառմամբ տեղահանվել եւ ցրվել են, ինչպես նաեւ այն մասին, որ կան վիրավորներ ու ձեռքակալվածներ:

Նշված փաստի առթիվ ՁԼՍ-ներով բազմաթիվ հրապարակումներ եղել են եւ դա հանրահայտ փաստ է:

2.5. Մամուլում հրապարակված՝ ՀՀ ոստիկանության պաշտոնական հաղորդագրության համաձայն, նախահարձակ են եղել նստացույցի մասնակիցները, իսկ ըստ նստացույցին ներկա անձանց կողմից մամուլով տարածված հաղորդագրության, նախահարձակ են եղել ոստիկանները եւ առանց որեւէ զգուշացման ուժ են գործադրել նստացույցին մասնակցող անձանց նկատմամբ, որոնց մի մասն այդ պահին քնած է եղել:

Նշված փաստի առթիվ ՁԼՍ-ով բազմաթիվ հրապարակումներ եղել են եւ դա հանրահայտ փաստ է:

2.6. Ըստ որոշ լրատվամիջոցների, այդ թվում «Երկիր Մեդիա» եւ www.a1plus.am-ի հրապարակումների, կատարվածը նկարահանող լրագրողներից ոստիկանության աշխատակիցներն առգրավել են նկարահանված նյութերը:

Նշված փաստի առթիվ ՁԼՍ-ներով բազմաթիվ հրապարակումներ եղել են եւ դա հանրահայտ փաստ է:

2.7. Լայն հանրությունը հակված է հավատալ կատարվածի մասին ոչ պաշտոնական տեղեկատվությանը, քանի որ այն ավելի հավաստի է թվում, մասնավորապես, Նախագահ Ռոբերտ Քոչարյանն իր մամուլի ասուլիսում հայտնեց, որ ոստիկանները, օպերատիվ տեղեկատվություն ստանալով նստացույցի մասնակիցների մոտ զենքի եւ զինամթերքի առկայության մասին, ցանկացել են կատարել խուզարկություն, այն դեպքում, երբ մինչ այս պահը չի հրապարակվել խուզարկություն կատարելու համար հիմք հանդիսացող որեւէ որոշում եւ ոստիկանության պաշտոնական հաղորդագրությունում էլ նման որոշման մասին խոսք չի եղել (խուզարկությունը դատավարական գործողություն է, որը կարող է կատարվել հարուցված քրեական գործի շրջանակներում, իրավասու անձի կողմից կայացված որոշման հիման վրա, քննչական խմբի մեջ մտնող անձի կողմից, իսկ մինչեւ խուզարկությունը սկսելը որոշումը պետք է ծանոթացվի խուզարկվողին):

Ռոբերտ Քոչարյանի ասուլիսը բոլոր հեռուստաալիքներով բազմաթիվ անգամ հեռարձակվել է եւ դա հանրահայտ փաստ է:

2.8. Մյուս կողմից, ոստիկանության տարածած տեսանյութում ցույց էր տրվում, թե ինչպես են ոստիկանները մերկ ձեռքով վերցնում եւ ուսումնասիրում գետնին ընկած (դրված) ատրճանակները, իրենց մատնահետքերը թողնելով դրանց վրա եւ ինքնին ջնջելով այն ենթադրյալ անձանց մատնահետքերը, ովքեր այդ ատրճանակները կամ այլ զինամթերքը հնարավոր է, որ դրել են այդտեղ: Այսինքն՝ տեսանյութում չէր եւաց ոստիկանության աշխատակիցների իրական ցանկությունը՝ պարզելու (մատնահետքերը ստուգելու միջոցով), թե ովքեր են այդ գետնին ու զինամթերքը դրել հեռուստատեսությամբ ցուցադրված տեղում, այլ տպավորությունն այնպիսին էր, որ դրանք այդտեղ են դրվել ցույց տալու համար:

Ոստիկանության տեսանյութը բոլոր կենտրոնական հեռուստաալիքներով բազմաթիվ անգամ հեռարձակվել է եւ դա հանրահայտ փաստ է:

2.9. Ինչեւէ, 2008թ. մարտի 1-ի օրվա երկրորդ կեսին զանգվածային լրատվամիջոցներով տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ նստացույցի ցրված մասնակիցները եւ նրանց միացած այլ քաղաքացիներ ինքնաբուխ հանրահավաք են իրականացնում Ա. Սյամնիկյանի արձանի մոտ գտնվող հրապարակում՝ Ֆրանսիայի եւ Իտալիայի դեսպանատների հարեւանությամբ: Տեղեկատվություն էր տարածվում նաեւ այն մասին, որ տեղի են ունենում ոստիկանների հետ ընդհարումներ:

Նշված փաստերի առթիվ ՋԼՄ-ներով բազմաթիվ հրապարակումներ եղել են եւ դա հանրահայտ փաստ է:

2.10. 2008թ. մարտի 1-ի երեկոյան հեռուստաընկերությունները հրապարակեցին Ռոբերտ Քոչարյանի ուղերձը ժողովրդին, ինչպես նաեւ ցույց տրվեց նրա հարցազրույցն այդ մասին:

Ուղերձն ունի հետեւյալ բովանդակությունը.

« ԴԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՔՈՉԱՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ

01 մարտի 2008թ.

Հարգելի հայրենակիցներ,

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի ընտրություններում պարտություն կրած՝ ինքնաառաջադրված թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանն ու իրեն շրջապատող արկածախնդիրների մի խումբ, չհաշտվելով կրած պարտության իրողության հետ, դիմել են ապօրինի գործողությունների: Դրանց թվում են՝ գետնի եւ զինամթերքի կուտակումն ու տեղափոխումը մարդաշատ վայրեր, որտեղ դրանց առկայությունը կարող է լուրջ վտանգ ներկայացնել քաղաքացիների կյանքին եւ առողջությանը, առանց իրազեկման հանրահավաքների եւ երթերի անցկացումը:

Չնայած նրան, որ 2008 թվականի նախագահական ընտրություններին մասնակցող թեկնածուների կողմից պահանջված վերահաշվարկները որեւէ լուրջ խախտումներ չեն հայտնաբերել, չի ներկայացվել որեւէ զանգատ Հայաստանի Հանրապետության վարչական դատարաններ, իսկ Սահմանադրական դատարանում Ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով ընթանում է ընտրությունների արդյունքների զանգատարկման ուսումնասիրություն, թեկնածու Տեր-Պետրոսյանի կողմնակիցները շարունակում են վիճարկել ընտրությունների ելքն ապօրինի միջոցներով: Ընդդիմության ներկայացուցիչների մի խումբ մարտի 1-ին անկարգություններ են իրականացրել Երեւանի կենտրոնում՝ պատճառելով վնաս քաղաքացիների եւ պետության գույքին, ինչպես նաեւ ստեղծելով ուղղակի սպառնալիք քաղաքացիների անվտանգության համար, ինչը վիճակը դարձնում է անվերահսկելի: Այդ գործողությունների թիրախը Հայաստանի Հանրապետության ձեռք բերած կայունությունն է, իսկ հետեւանքը՝ միջազգային հեղինակության խաթարումը:

Որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահպանման երաշխավոր՝ որեւէ մեկին չեն թույլատրելու վտանգել մեր պետության սահմանադրական կարգը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգը կանխելու նպատակով, ղեկավարվելով Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի դրույթներով, ես խորհրդակցել եմ Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, որից հետո ստորագրել եմ հրամանագիր, որով Երեւան քաղաքում մարտի 1-ից 20 օր ժամկետով հայտարարել եմ արտակարգ դրություն:

Հրամանագրով նախատեսված են արտակարգ դրության հետեւյալ միջոցառումները.

1) ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի եւ այլ զանգվածային միջոցառումների իրականացման արգելում:

2) գործադուլների եւ կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելում:

3) իրավապահ մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, անձանց, տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում եւ զննության իրականացում:

4) զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պաշտոնական տեղեկատվության սահմաններում:

5) առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության թռուցիկների եւ այլ ձեռով քաղաքական քարոզչության իրականացման արգելում:

6) արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների եւ այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցում:

7) արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած եւ տվյալ տարածքում չբնակվող անձանց վտարում՝ նրանց միջոցների հաշվին, իսկ միջոցներ չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով:

Բոլորին զսպվածության եւ խոհեմության կոչ են անում: Այս իրավիճակում ավելի քան երբևէ անհրաժեշտ է դրսևորել համախմբվածություն, անշեղորեն կատարել օրենքի պահանջները:

Վստահեցնում են, որ արտակարգ դրությունը կդադարեցվի դրա հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացումից անմիջապես հետո»:

2.11. ՀՀ Նախագահի պաշտոնական www.president.am կայքում տեղադրված է նաեւ Նախագահի 2008թ. մարտի 1-ի հրամանագիրը «Արտակարգ դրություն հայտարարելու մասին»:

Նշված հրամանագիրն ունի հետեւյալ տեսքը.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգին սպառնացող վտանգը կանխելու եւ բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ եւ 117-րդ հոդվածի 6-րդ կետերով՝

ո թ ո շ ու մ ե մ.

1. Երեւան քաղաքում 2008 թվականի մարտի 1-ից 20 օր ժամկետով հայտարարել արտակարգ դրություն:

2. Արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացման եւ այլ հրատապ հարցերի կանոնակարգման եւ իրականացման ղեկավարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Նախագահին:

3. Արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովումը վերապահել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը:

4. Սահմանել արտակարգ դրություն հայտարարված տարածքում հետեւյալ ժամանակավոր սահմանափակումները՝

1) ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի եւ այլ զանգվածային միջոցառումների իրականացման արգելում.

2) գործադուլների եւ կազմակերպությունների գործունեությունը դադարեցնող կամ կասեցնող այլ միջոցառումների արգելում.

3) իրավապահ մարմինների կողմից, անհրաժեշտության դեպքում, անձանց, տրանսպորտային միջոցների տեղաշարժի սահմանափակում եւ զննության իրականացում.

4) զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում.

5) առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության՝ թռուցիկների եւ այլ ձեւով քաղաքական քարոզչության իրականացման արգելում.

6) արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների եւ այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցում.

7) արտակարգ դրության իրավական ռեժիմը խախտած եւ տվյալ տարածքում չբնակվող անձանց վտարում՝ նրանց միջոցների հաշվին, իսկ միջոցներ չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ սույն հրամանագրի իրականացումն ապահովելու ուղղությամբ:

6. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում տեղեկացման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՅ

Ռ.ՔՈՉԱՐՅԱՆ

2008թ. մարտի 01
Երեւան

2.12. Այնուհետեւ 10.03.2008թ.-ին Նախագահն ընդունել է մեկ այլ հրամանագիր, որն ունի հետեւյալ տեսքը, որը նույնպես առկա է ն www.president.am կայքում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ՆՅ-35-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ և 117-րդ հոդվածի 6-րդ կետերով՝

ո թ ո զ ու մ ե մ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի մարտի 1-ի «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՆՅ-35-Ն հրամանագրի 4-րդ կետի 6-րդ և 7-րդ ենթակետերը:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում տեղեկացման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՅ

Ռ.ԶՈՉԱՐՅԱՆ

2008թ. մարտի 10
Երեւան

2.13. Առ ոչինչ ճանաչման ենթակա հրամանագիրը օգտագործվել է պետական պաշտոնյաների կողմից կամայականորեն մի շարք ընդդիմադիր թերթերի եւ վեբ-կայքերի թողարկումներն արգելելու համար: «Հայկական ժամանակ», «Առավոտ», «Չորրորդ իշխանություն», «Հայք», «Ժամանակ Երեւան», «Հրապարակ» թերթերի խմբագրություն են եկել Ազգային անվտանգության ծառայությունից աշխատակիցներ եւ սովորական թղթի վրա գրառված ծանուցում են ներկայացրել թերթերի խմբագրության պատասխանատուներին:

Նշված փաստերը հաստատվում է հայցադիմումին կից ներկայացված ապացույցով:

2.14. Ներկայումս ընդդիմադիր եւ անկախ՝ «Հայկական ժամանակ», «Առավոտ», «Չորրորդ իշխանություն», «Հայք», «Ժամանակ Երեւան», «Հրապարակ» թերթերը լույս չեն տեսնում, այդ թերթերի վեբ-կայքերը նույնպես արգելափակված են: Տվյալ սահմանափակումները տեղի են ունեցել կամայական, ո՛չ վիճարկվող Հրամանագրի դրույթների հիման վրա, ո՛չ էլ ՀՀ օրենքների շրջանակներում: Օրինակ՝ «Չորրորդ իշխանություն» թերթը դիմել է տարբեր պետական ատյանների եւ խնդրել պարզաբանում, որին առ այսօր պատասխան չի տրվել: *Նշված փաստի առթիվ ներկայացվում է նամակի պատճենը՝ արտատպված վեբ-կայքից եւ արտատպված այլ տեղեկանքներ՝ հայտարարություններ, պարզաբանումներ, տեղեկանք-հիմնավորումներ:*

3. Մեր պահանջների իրավական հիմքերը

3.1. Գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունը թույլ է տվել «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ եւ 11-րդ հոդվածներով պաշտպանվող իրավունքների եւ ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակում: Սահմանափակումը հակասում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետին, 11-րդ հոդվածի 2-րդ կետին եւ 15-րդ հոդվածին: Բացի դրանից, Հայաստանի Հանրապետությունը թույլ է տվել նաեւ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում:

Այս պնդումը, մեր կարծիքով, հիմնավորվում է հետեւյալ փաստարկներով.

3.2. Նախագահի հրամանագրի 4(1) կետով ուղղակիորեն արգելվում է ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի եւ այլ զանգվածային միջոցառումների իրականացումը:

Հրամանագրի 4(4) կետով նախատեսվում է, որ ՁԼՄ-ների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում:

Հրամանագրի 4(5) կետով արգելվում է առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության՝ թուլցիկների եւ այլ ձեւով քաղաքական քարոզչության իրականացումը:

Հրամանագրի 4(6) կետով ժամանակավորապես կասեցվում է արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների եւ այլ հասարակական կազմակերպությունների գործունեությունը:

Այսպիսով, ակնհայտ է, որ պետությունը շեղվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով եւ 11-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված իր պարտավորություններից:

3.3. Մենք նաեւ գտնում ենք, որ այդ շեղումը չի համապատասխանում Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետին: Այսպես.

Կոնվենցիայի 15-րդ հոդվածին համապատասխան, նման շեղումը թույլատրվում է պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ: Պատերազմի հարցը այս դեպքին չի վերաբերում, ուստի մեր կողմից չի քննարկվում: Տվյալ դեպքում նշանակություն ունի, թե արդյո՞ք առկա է եղել ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրություն, թե՞ ոչ: Մեր համոզմամբ, ազգի կյանքին սպառնացող դրություն չի եղել:

Ինչպես բազմիցս իրավացիորեն նշել է Եվրոպական դատարանը, ազգի կյանքին սպառնացող վտանգի գնահատման հարցում պետությունն ունի հայեցողության լայն սահմաններ: Այնուամենայնիվ, այդ հայեցողությունն անսահման չէ: Պետության քայլերը գնահատելիս պետք է հաշվի առնվեն մի շարք գործոններ, այդ թվում՝ պարտավորություններից շեղմամբ շոշափվող իրավունքների բնույթը, տեղողությունը, ինչպես նաև՝ արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները:

3.4. Այդ տեսանկյունից գնահատելով հրամանագրի ընդունման ժամանակ ստեղծված իրավիճակը, կարելի է հետեւություն անել, որ ազգի կյանքին սպառնացող իրավիճակ գոյություն չի ունեցել: Հանգամանքները, որոնք հիմք են ծառայել նման սահմանափակումներով արտակարգ դրություն հայտարարելու համար, այդօրինակ ծայրահեղ միջոցների դիմելու հիմքեր ամենեւին չէին տալիս:

Ցուցարարները հավաքված էին Երեւանի քաղաքապետարանին հարող հրապարակում, որտեղ գտնվում են Ֆրանսիայի եւ Իտալիայի դեսպանատները: Ամենայն հավանականությամբ, այդ տեղն ընտրվել էր այն մտավախությունից, որ կառավարությունը կարող է կրկին փորձել ուժ կիրառել ցուցարարների նկատմամբ, ինչպես դա տեղի էր ունեցել նույն առավոտյան Ազատության հրապարակում: Բացի քաղաքապետարանին հարող հրապարակից, ցուցարարները զբաղեցնում էին այդ հրապարակ մտնող փողոցների՝ հրապարակին հարող 200-300 մետր հատվածները:

Մինչեւ ոստիկանության կողմից գրոհելու պահը ցույցը անցնում էր խաղաղ, բռնության կոչեր չեն արձանագրվել: Հակառակը, պարբերաբար կոչեր են հնչել՝ չենթարկվել սադրանքների, չխախտել հասարակական կարգը:

Ցուցարարների եւ ոստիկանների միջեւ ընդհարումները տեղի են ունեցել հրապարակ մտնող փողոցներից մեկում՝ Գրիգոր Լուսավորչի փողոցում: Ընդհանուր առմամբ՝ ցույցերը եւ ընդհարումները տեղի են ունեցել 800-1000 մետր շառավղով տարածքում, քաղաքի մյուս հատվածներում միջադեպեր չեն արձանագրվել:

3.5. Ոստիկանության գրոհի ժամանակ տեղի ունեցած ընդհարումներից հետո կոտրվել եւ թալանվել է հրապարակից մոտ 700-800 մետր հեռավորության վրա գտնվող երկու խանութ: Ընդ որում, խանութների թալանը տեղի էր ունենում Երեւանի Մաշտոցի պողոտայում, ոստիկանական ուժերի աչքի առջեւ, նրանցից 100-150 մետր հեռավորության վրա: Այդ ընթացքում (սկսած մոտավորապես ժամը 23-ից, մի քանի ժամ անընդմեջ) ոստիկանները չեն միջամտել եւ միջոցներ չեն ձեռնարկել իրենց աչքի առջեւ տեղի ունեցող թալանը դադարեցնելու համար:

Ցույցը այդ նույն ժամանակ տեղի էր ունենում թալանվող խանութներից մոտ 300 մետր հեռավորության վրա: Թալանվող խանութները գտնվել են ցուցարարների տեսադաշտից դուրս:

Առավոտյան Ազատության հրապարակում եւ քաղաքապետարանին հարող տարածքում տեղի ունեցած իրադարձություններից բացի, որեւէ տեղ միջադեպեր չեն արձանագրվել:

3.6. Եվրոպական դատարանը «ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրությունը» բնորոշել է հետեւյալ կերպ.

«Ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն» հասկացությունն իր մեջ ներառում է վրա հասած եւ լայնորեն տարածված վտանգ: Այդ իսկ պատճառով 15-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմանների համար անհրաժեշտ են հետեւյալ տարրերը.

1. Այն պետք է լինի իրական եւ անխուսափելի,
2. Դրա հետեւանքները պետք է վերաբերեն ողջ ազգին,
3. Վտանգված պետք է լինի հասարակության կազմակերպված կյանքի շարունակությունը,
4. Ճգնաժամը կամ վտանգը պետք է ունենան բացառիկ բնույթ այն իմաստով, որ սովորական միջոցները եւ սահմանափակումները, որոնք թույլատրվում են Կոնվենցիայով՝ անվտանգությունը, առողջությունը եւ կարգը պահպանելու համար, ակնհայտ անհամաչափ լինեն»:

Արտակարգ դրություն մտցնելու համար հիմք ծառայած վտանգը ՀՀ Նախագահի ուղերձում նկարագրված է հետեւյալ կերպ.

«Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի ընտրություններում պարտություն կրած՝ ինքնառաջադրված թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանն ու իրեն շրջապատող արկածախնդիրների մի խումբ, չհաշտվելով կրած պարտության իրողության հետ, դիմել են ապօրինի գործողությունների: Դրանց թվում են՝ զենքի եւ զինամթերքի կուտակումն ու տեղափոխումը

մարդաշատ վայրեր, որտեղ դրանց առկայությունը կարող է լուրջ վտանգ ներկայացնել քաղաքացիների կյանքին եւ առողջությանը, առանց իրազեկման հանրահավաքների եւ երթերի անցկացումը:

Չնայած նրան, որ 2008 թվականի նախագահական ընտրություններին մասնակցող թեկնածուների կողմից պահանջված վերահաշվարկները որեւէ լուրջ խախտումներ չեն հայտնաբերել, չի ներկայացվել որեւէ գանգատ Հայաստանի Հանրապետության վարչական դատարաններ, իսկ Սահմանադրական դատարանում ընտրական օրենսգրքով նախատեսված կարգով ընթանում է ընտրությունների արդյունքների գանգատարկման ուսումնասիրություն, թեկնածու Տեր-Պետրոսյանի կողմնակիցները շարունակում են վիճարկել ընտրությունների ելքն ապօրինի միջոցներով: Ընդդիմության ներկայացուցիչների մի խումբ մարտի 1-ին անկարգություններ են իրականացրել Երեւանի կենտրոնում՝ պատճառելով վնաս քաղաքացիների եւ պետության գույքին, ինչպես նաեւ ստեղծելով ուղղակի սպառնալիք քաղաքացիների անվտանգության համար, ինչը վիճակը դարձնում է անվերահսկելի: Այդ գործողությունների թիրախը Հայաստանի Հանրապետության ձեռք բերած կայունությունն է, իսկ հետեւանքը՝ միջազգային հեղինակության խաթարումը:

Որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահպանման երաշխավոր՝ որեւէ մեկին չեն թույլատրելու վտանգել մեր պետության սահմանադրական կարգը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգը կանխելու նպատակով, ղեկավարվելով Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի դրույթներով, եւ խորհրդակցել եւ Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, որից հետո ստորագրել եւ հրամանագիր, որով Երեւան քաղաքում մարտի 1-ից 20 օր ժամկետով հայտարարել եւ արտակարգ դրություն:

Ինչպես երեւում է Նախագահի ուղերձի այս պատճառաբանություններից, սպառնացող վտանգը ամենեւին էլ չէր հասել այն շեմին, որը, ըստ Եվրոպական դատարանի կողմից բերված չափանիշների, կարելի է գնահատել որպես «ազգի կյանքին սպառնացող արտակարգ դրություն»:

Ասվածը վկայում է այն մասին, որ ազգի կյանքին սպառնացող իրավիճակ իրականում գոյություն չի ունեցել, հետեւապես կառավարությունը խախտել է Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետը եւ դրանից ելնելով՝ նաեւ 10-րդ եւ 11-րդ հոդվածները:

3.7. Անգամ եթե ստեղծված իրավիճակը կառավարության կողմից գնահատվել է որպես ազգի կյանքին սպառնացող, չի կարելի ասել, որ պետությունը գործել է Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

Հաշվի առնելով Եվրոպական դատարանի կողմից սահմանված մյուս չափանիշը՝ պարտավորություններից շեղմամբ շոշափվող իրավունքների բնույթը, կարելի է ասել, որ սահմանափակումներն ակնհայտորեն անհամաչափ են եւ դրանց խստությունը չի բխում ստեղծված իրավիճակից:

Մասնավորապես, 4(1) կետով ուղղակիորեն արգելվում է ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի եւ այլ զանգվածային միջոցառումների իրականացումը: Նման արգելքն ինքնին բացառում է այն իրադարձությունների կրկնությունը, որոնք դիտվել է արտակարգ դրություն մտցնելու հիմք: Հետեւապես, նման արգելքն առկայությունը արդեն իսկ բավարար էր՝ Նախագահի ուղերձում նկարագրված վտանգները կանխելու համար:

3.8. Հաշվի առնելով հրամանագրի 4(1) կետով նախատեսված այդ արգելքի առկայությունը, մենք գտնում ենք, որ հրամանագրի 4(4) կետով նախատեսված արգելքը՝ զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում իրականացնելուն հարկադրումը, 4(5) կետով՝ առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության՝ թուցիկների եւ այլ ձեւով քաղաքական քարոզչության իրականացման արգելումը, 4(6) կետով՝ արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների եւ այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցումը ակնհայտորեն անհամաչափ են ստեղծված իրավիճակին եւ որեւէ կերպ արդարացված չեն:

Ասվածը եւս մեկ անգամ հիմք է տալիս պնդելու, որ խախտվել է Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 1-ին կետը եւ դրանից ելնելով՝ նաեւ 10-րդ եւ 11-րդ հոդվածները:

3.9. Բացի դրանից, սկսած 2008թ. մարտի 2-ից մի շարք պետական մարմիններ՝ հղում կատարելով Նախագահի հրամանագրի վրա, կամայականորեն մտցրել են այնպիսի սահմանափակումներ, որպիսիք հրամանագրով նախատեսված չէին:

Այսպես, մարտի 2-ից արգելվել է մի շարք լրատվամիջոցների թողարկումը՝ լույս չեն տեսնում «Հայկական ժամանակ», «Առավոտ», «Չորրորդ իշխանություն», «Հայք», «Ժամանակ Երեւան», «Հրապարակ», «Տարեգիր» թերթը: Փակվել են նաեւ բազմաթիվ ինտերնետային թերթեր, որպիսիք են՝ www.a1plus.am, www.aravot.am, www.hzh.am, www.taregir.am, www.lragir.am, www.azatutyun.am եւ այլն:

Նման սահմանափակումները չեն բխում Նախագահի հրամանագրից, հետեւապես, բոլոր դեպքերում չեն կարող դիտարկվել Կոնվենցիայի 15-րդ հոդվածի տեսանկյունից:

3.10. Նկատի ունենալով, որ 2.8 կետում նշված սահմանափակումներով պետությունը միջամտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված իրավունքներին եւ ազատություններին, մենք պնդում ենք, որ այդ սահմանափակումը չի համապատասխանում նույն հոդվածի 2-րդ կետին:

Մասնավորապես, նշված սահմանափակումները նախատեսված չեն օրենքով եւ մտցվել են կամայականորեն՝ իշխանության տարբեր ներկայացուցիչների հրահանգների հիման վրա, սակայն հիմքում ունենալով Նախագահի հրամանագիրը:

3.11. Նման պայմաններում հանրությունը զրկվել է 2008թ. մարտի 1-ի եւ լույս մարտի 2-ի գիշերը տեղի ունեցած ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունից զատ այլ, համակողմանի տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, ինչով էլ խախտվել են Կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված մեր իրավունքները:

3.12. Ինչպես արդեն նշվեց, արգելվել է «Հայկական ժամանակ», «Առավոտ», «Չորրորդ իշխանություն», «Հայք», «Ժամանակ Երեւան», «Հրապարակ», «Տարեգիր» թերթերի թողարկումը, փակվել են բազմաթիվ ինտերնետային թերթեր, որպիսիք են՝ www.a1plus.am, www.aravot.am, www.hzh.am, www.taregir.am, www.lragir.am, www.azatutyun.am եւ այլն: Այս սահմանափակումները ենթարկված բոլոր լրատվամիջոցները սատարում են ընդդիմադիր ուժերին, այն է՝ հրապարակում են նաեւ ոչ պաշտոնական տեղեկատվություն: Վստահաբար կարելի է ասել, որ այդ լրատվամիջոցների գործունեության արգելումը պայմանավորված է հենց դրանց ընդդիմադիր հայացքներով:

Դրան զուգահեռ՝ Հանրային հեռուստաընկերությունը եւ կառավարության վերահսկողության տակ գտնվող հեռուստաընկերությունները եթերում անարգել ցույց են տալիս տեսահոլովակներ, որտեղ տարբեր մարդկանց կողմից ընդդիմության ղեկավարը անվանվում է սրիկա, տականք եւ այլն: Եթե հաշվի առնենք Նախագահի հրամանագիր 4(4) կետը, ստացվում է, որ այս արտահայտությունները կամ պաշտոնական տեղեկատվության սահմաններում են, կամ էլ՝ դուրս լինելով պաշտոնական տեղեկատվության սահմաններից, այնուամենայնիվ թույլատրվում են եթեր, քանի որ արտահայտում են իշխանական թեւի հայացքները:

Արդյունքում ստացվում է, որ ընդդիմադիր հանդուժողներ կամ այլակարծություն ունեցող լրագրողներին եւ լրատվամիջոցներին առհասարակ հնարավորություն չի տրվում օգտվելու խոսքի ազատության իրավունքից, մինչդեռ իշխանության հայացքները կիսող լրագրողները եւ լրատվամիջոցները ունեն անսահմանափակ խոսքի իրավունք, նույնիսկ եթե իրենց տարածած տեղեկատվությունն ուղղակի վիրավորում է ընդդիմության ղեկավարին եւ/կամ ստահող է:

Այդ պատճառով գտնում ենք, որ տեղի է ունեցել նաեւ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում՝ կապված 10-րդ հոդվածով սահմանված իրավունքների եւ ազատությունների հետ:

3.13. Գտնում ենք, որ ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» 2008թ. մարտի 1-ի հրամանագիրը (այսուհետ՝ Հրամանագիր) եւ դրա 4-րդ կետի՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերը հակասում են ՀՀ Սահմանադրության 1, 3, 5, 6, 7, 29, 27, 28, 43, 44, 83.5 հոդվածների, «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 4 հոդվածի 1-ին մասին, 10, 11 եւ 14 հոդվածներին, «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 5 հոդվածի, 9 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի, «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 4 եւ 7 հոդվածների, «Կուսակցությունների մասին»

ՀՀ օրենքի ու «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2, 13, 38, 68 հոդվածների պահանջներին եւ խախտում է վերը նշված նորմերով սահմանված եւ պաշտպանվող իրավունքները, ազատություններն ու դրանց երաշխիքները, ուստի ենթակա է անվավեր ճանաչման, հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության՝

- 1 հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»,
- 3 հոդվածի համաձայն. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են:
Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:
Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:
- 5 հոդվածի համաձայն. «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան[...]:
Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:
- 6 հոդվածի համաձայն «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն:
Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը եւ օրենքներին: [...]
Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով»:
- 83.5 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի համաձայն. «Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝
1) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու եւ պաշտպանելու պայմանները եւ կարգը.
2) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաեւ պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը [...]:»:

Ի կատարումն ՀՀ Սահմանադրության վերը նշված դրույթների, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերը սահմանում են. «3. Նորմատիվ իրավական ակտն [...] պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը:

Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ:

Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության եւ օրենքների հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով:

4. Իրավական նորմն օրենքով սահմանված դեպքերում եւ սույն օրենքով սահմանված կարգով` [...] ընդունած վարքագծի կանոնն է, որն [...] պարտադիր է անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց համար»:

Սույն օրենքի 3 հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Իրավական ակտը պետք է համապատասխանի օրենսդրական տեխնիկայի կանոններին», իսկ օրենսդրական տեխնիկայի կանոնները սահմանող 5-րդ Գլխում գետեղված 38 հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն. «2. Իրավական ակտի հերթական համարը սահմանում է իրավական ակտն ընդունող մարմինը՝ միայն արաբական թվանշաններով: Համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

3. Իրավական ակտում դա ընդունող մարմինը նշում է կատարում դրա բնույթի մասին «Լ» (նորմատիվ), «Ա» (անհատական) եւ «Լ» (ներքին, լոկալ) տառերով: Սույն նշումները կատարվում են իրավական ակտի հերթական համարից անմիջապես հետո:
Համապատասխան նշում չունեցող իրավական ակտերը համարվում են անհատական իրավական ակտեր: Դրանց նորմատիվ բնույթ ունեցող դրույթներն իրավաբանական ուժ չունեն:

Վիճարկվող Հրամանագիրը հերթական համար եւ «Ն», «Ա» կամ «Լ» տառերով նշում չունի, ուստի այն օրենքի ուժով համարվում է անհատական իրավական ակտ եւ դրա նորմատիվ բնույթ ունեցող դրույթներն իրավաբանական ուժ չունեն, որպիսի պայմաններում էլ ենթակա է անվավեր ճանաչման:

Նույն օրենքի 61.1 հոդվածի համաձայն. «1. **Սույն օրենքով նախատեսված իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտերն առ ոչինչ են եւ ենթակա չեն կատարման կամ կիրառման:**
2. *Իրավաբանական ուժ չունեցող իրավական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն»:*

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62 հոդվածը սահմանում է վարչական ակտն առ ոչինչ լինելու հիմքերը, որի համաձայն.

«1. Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետեւյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երեւում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը.

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ուն է հասցեագրված (վերը նշված փաստարկներում արդեն հիմնավորվել է, որ հրամանագիրը անհատական ակտ է, որում պետք է պարզ նշված լիներ, թե որոշակիորեն այն ուն է հասցեագրված), կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք (ակտով երեւանում գտնվող ժողովրդի, ինչպես նաեւ ՁԼՄ-ի, Կուսակցությունների ու ՀԿ-ների վրա դրվել են ոչ իրավաչափ պարտականություններ, իսկ ոստիկանությանն ու պաշտպանությանը տրվել են ոչ իրավաչափ իրավունքներ):

2. Առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի եւ ենթակա չէ կատարման կամ կիրառման:

3. Առ ոչինչ վարչական ակտը չկատարելը չի կարող առաջացնել որեւէ պատասխանատվություն այն անձանց համար, ուն հասցեագրված է:

Առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

4. Առ ոչինչ վարչական ակտն ընդունած վարչական մարմինը պարտավոր է իր նախաձեռնությամբ կամ արդարացված շահ ունեցող ցանկացած անձի դիմումի հիման վրա անհապաղ հաստատել այդ ակտի առ ոչինչ լինելը: Կարելի է զուգահեռ դիմել նաեւ Նախագահին իր ընդունած ակտն առ ոչինչ ճանաչելու պահանջով:

3.14. Վերը նշվածից հետեւում է, որ ՀՀ նախագահի անհատական իրավական ակտ Հրամանագիրն ուղղված է անորոշ անձանց՝ Երեւան քաղաքում գտնվող ժողովրդին, ուստի այն իրավաբանական ուժ չունի եւ առ ոչինչ է, որպիսի պայմաններում Հրամանագրի կատարումն ու կիրառումը, այն է՝ Երեւան քաղաքում գտնվող անձանց ՀՀ Սահմանադրությամբ ու օրենքներով երաշխավորված իրավունքներն ու ազատություններն արգելող ու սահմանափակող դրույթների կիրառումը ՀՀ ոստիկանության ու ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կառաջացնի օրենքով սահմանված պատասխանատվություն:

3.15. Եթե անգամ Հրամանագիրը համապատասխաներ օրենսդրական տեխնիկայի կանոններին եւ ունենար հերթական համար ու «Ն» տառով նշում, այսինքն՝ լիներ նորմատիվ իրավական ակտ, ապա այս դեպքում էլ ենթակա են անվավեր ճանաչման Հրամանագրի 4-րդ կետի՝ 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ եւ 7-րդ ենթակետերը, հետեւյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 29 հոդվածի համաձայն. «*Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք*»:

«Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «1. *Հրապարակային միջոցառում կազմակերպելու իրավունք ունի քաղաքացին (քաղաքացիները) կամ իրավաբանական անձը (իրավաբանական անձինք):*

2. *Հրապարակային միջոցառումը կարող է կազմակերպվել եւ անցկացվել սույն օրենքով սահմանված ձեւերից մեկով կամ մի քանիսով:*

3. *Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք չունեն խոչընդոտելու սույն օրենքով սահմանված կարգով անցկացվող հրապարակային միջոցառումներին կամ միջամտելու դրանց [...]*»:

Հակառակ վերը նշվածի, Հրամանագրի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է. «Ժողովների, հանրահավաքների ցույցերի, երթերի եւ այլ զանգվածային միջոցառումների իրականացման արգելում»:

ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների եւ տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Պետությունը երաշխավորում է տեղեկատվական [...] բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության առկայությունը եւ գործունեությունը»:

«Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք՝

- լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները սահմանող 4 հոդվածի համաձայն՝ «1. Լրատվական գործունեությունն իրականացնողները եւ լրագրողները գործում են ազատորեն՝ հրավահափասարության, օրինականության, խոսքի (արտահայտվելու) ազատության եւ բազմակարծության սկզբունքների հիման վրա:

Լրագրողն իր մասնագիտական օրինական գործունեության ընթացքում, որպես հասարակական պարտք կատարող անձ, պաշտպանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: [...]

3. Արգելվում է՝

1) գրաբնությունը:

2) որեւէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի եւ լրագրողի նկատմամբ:

3) լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը: [...]

5) ցանկացած, այդ թվում՝ այլ երկրներում թողարկված եւ տարածված լրատվության միջոցներից օգտվելու՝ անձի իրավունքի սահմանափակումը»:

- լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները սահմանող 7-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է միայն օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաեւ այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը, ինչպես նաեւ տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, եւ այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար եւ դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

3.16. Հակառակ վերը նշվածի, Հրամանագրի 4-րդ կետի՝

- 4-րդ ենթակետով սահմանվել է. «զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ հրապարակումները կարող են իրականացվել բացառապես պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում»,

- 5-րդ ենթակետով սահմանվել է. «առանց համապատասխան պետական մարմինների թույլտվության՝ թռուցիկների եւ այլ ձեռով քաղաքական քարոզչության իրականացման արգելում»:

ՀՀ Սահմանադրության 28 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում արհեստակցական միություններ կազմելու ,ւ դրանց անդամագրվելու իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու եւ դրանց անդամագրվելու իրավունք: [...]

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով»:

«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքն ու «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքն ընդհանրապես այդ միավորումների գործունեությունը կասեցնելու դեպքեր չեն նախատեսում, ուստի կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների գործունեության կասեցման օրենքով նախատեսված դեպք չկա:

Հակառակ վերը նշվածի, Հրամանագրի 4-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանվել է. «*արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայող հանգամանքների վերացմանը խոչընդոտող կուսակցությունների եւ այլ հասարակական կազմակերպությունների գործունեության ժամանակավոր կասեցում*»:

Թեև Նախագահի մեկ այլ՝ 2008թ. մարտի 10-ի հրամանագրով նշված Հրամանագրի 4-րդ կետի 6-րդ եւ 7-րդ ենթակետերն ուժը կորցված են ճանաչվել, սակայն դրանք պետք է ճանաչվեն նաև ոչ իրավաչափ, քանի որ դրանով սահմանափակվել, ավելի ճիշտ ըստ էության արգելվել է Կուսակցության եւ կուսակցության անդամների ակտիվ հասարակական-քաղաքական գործունեությունը ծավալվող իրադարձությունների դեմ, այդ թվում խաղաղ հանրահավաքների, ցույցերի միջոցով քաղաքացիական հասարակությունից շեղումների վերաբերյալ բողոքի արտահայտումը:

3.17. ՀՀ Սահմանադրության 3, 43 եւ 44 հոդվածները երաշխիքներ են սահմանում վերը նշված իրավունքների ու ազատությունների համար, ըստ այդմ՝

- 3 հոդվածի համաձայն. «*Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են:*

Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

- 43 հոդվածի համաձայն. «*Մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:*

Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող զերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

- 44 հոդվածի համաձայն. «*Մարդու եւ քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17, 22 եւ 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում*»:

ՀՀ Սահմանադրության սույն կետում նշված 3, 43 եւ 44 հոդվածները Սահմանադրության 115 եւ 116 հոդվածների վերապահումներում ընդգրկված չեն, ուստի ուժի մեջ են մտել ՀՀ պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից ու անմիջականորեն գործում են:

3.18. Ինչպես տեսնում ենք, որպես ՀՀ Սահմանադրության 29, 27 եւ այլ հոդվածներով նախատեսված հիմնական իրավունքների ու ազատությունների երաշխավորում՝ Սահմանադրությամբ սահմանված է նաև, որ այդ իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, կամ արտակարգ դրության ժամանակ՝ օրենքով սահմանված կարգով, իսկ պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Վիճարկվող Հրամանագրում, սակայն, որեւէ հղում չկա այն օրենքին, որով սահմանված կարգով է ՀՀ նախագահին արգելում է կազմակերպել կամ մասնակցել օրենքի պահանջների պահպանմամբ հրավիրված ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի եւ այլ զանգվածային միջոցառումների, որի մեջ են մտնում նաև մշակութային երեկոները: Որեւէ նշում չկա նաև այն մասին, թե որ օրենքով սահմանված կարգով է ՀՀ նախագահին արգելում տեղեկատվություն

տարածող զանգվածային լրատվության միջոցներից ստանալու պետական մարմինների պաշտոնական տեղեկատվությունից տարբերվող այլ տեղեկատվություն՝ պետական ել ներքաղաքական հարցերի առնչությամբ: Նույնը վերաբերում է նաև ազատ տեղաշարժման ու գաղափարական բազմակարծության սահմանափակմանը:

Վիճարկվող Հրամանագրում նման նշում չկա, որովհետև նման օրենք չկա, ինչն, ի դեպ, բխում է նաև վիճարկվող Հրամանագրից, որը հղում է պարունակում ՀՀ Սահմանադրության 55 հոդվածի 14 կետին, որի համաձայն. «Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին»:

Արտակարգ դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ:

Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով», ինչպես նաև 117 հոդվածի 6-րդ կետով, որի համաձայն. «Սահմանադրության փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանումն օրենքով սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում հանրապետության նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի եւ վարչապետի հետ, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ եւ այդ մասին ուղերձով դիմում ժողովրդին»:

3.19. Գտնում ենք, որ ՀՀ նախագահի կողմից իրավիճակից թելադրվող միջոցառումները չեն կարող ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված, բարձրագույն արժեք համարվող ու անմիջականորեն գործող այնպիսի իրավունքների եւ ազատությունների իրականացման սահմանափակում, ավելին՝ արգելում նախատեսեն, որոնք կարող են սահմանափակվել բացառապես օրենքով սահմանված կարգով:

Այսինքն՝ համապատասխան օրենքի բացակայության պայմաններում իրավիճակից թելադրվող միջոցառումները կարող են իրականացվել այն սահմանում, որի շրջանակներում չեն սահմանափակվի հարյուր հազարավոր այլ անձանց, այդ թվում «Ժառանգություն» կուսակցության ու նրա անդամների սահմանադրական իրավունքները:

Վերը նշված պատճառաբանությամբ նույնպես գտնում ենք, որ վիճարկվող Հրամանագիրը եւ դրա 4-րդ կետի 1, 3, 4, 5 ենթակետերը ենթակա են անվավեր ճանաչման:

Լրացուցիչ հիմնավորում

«Ժառանգություն» կուսակցությունը հանդիսանում է պատշաճ հայցվոր, ինչի պատճառաբանությունը հետեւյալն է. կուսակցությունը վիճարկվող Հրամանագրի գործունեության ժամանակահատվածում զրկված է եղել հրապարակային միջոցառումների անցկացման հնարավորությունից, չի կարողացել ազատորեն տարածել հայտարարություններ եւ կարծիքներ, չի կարողացել ստանալ իր համար անհրաժեշտ՝ պաշտոնականից տարբերվող տեղեկատվություն երկու տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Գտնում ենք, որ վիճարկվող ակտը ենթակա է անվավեր ճանաչման նաև հետեւյալ պատճառաբանությամբ.

Վիճարկվող ակտով ոչ թե սահմանափակվել, այլ որոշակի ժամանակահատվածով (այս անգամ 20 եւ/կամ 10 օրով, սակայն հաջորդը կարող է լինել մեկ տարով կամ ամբողջ՝ 5 տարով) արգելվել է օրենքի պահանջների պահպանմամբ ժողովների, հանրահավաքների, ցույցերի, երթերի եւ այլ զանգվածային միջոցառումների իրականացումը, զանգվածային լրատվության միջոցների կողմից պետական եւ ներքաղաքական հարցերի առնչությամբ պետական մարմինների պաշտոնական տեղեկատվությունից բացի, բազմակարծության ապահովման համար այլ տեղեկատվության հրապարակումները եւ այլն:

Նման արգելքի պայմաններում հեռուստաթերթով ու զանգվածային լրատվության որոշ այլ միջոցներով բազմակի անգամներ հրապարակվում է ՀՀ նախագահի ուղերձը ժողովրդին, որում

ուղղակի ասված է. «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2008 թվականի ընտրություններում պարտություն կրած՝ ինքնաառաջադրված թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանն ու իրեն շրջապատող արկածախնդիրների մի խումբ, չհաշտվելով կրած պարտության իրողության հետ, դիմել են ապօրինի գործողությունների: Դրանց թվում են՝ զենքի եւ զինամթերքի կուտակումն ու տեղափոխումը մարդաշատ վայրեր»:

Այսպիսով՝ ՀՀ նախագահն իր ուղերձով ներքաղաքական հարցերի պաշտոնական տեղեկատվություն է տարածում այն մասին, որ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանը, չհաշտվելով կրած պարտության իրողության հետ, դիմել է ապօրինի գործողությունների: Դրանց թվում են՝ զենքի եւ զինամթերքի կուտակումն ու տեղափոխումը մարդաշատ վայրեր: Փաստորեն ՀՀ նախագահը իր ուղերձում պաշտոնական տեղեկատվության ձեւով նախագահի թեկնածուին ուղղակիորեն մեղադրում է զենքի եւ զինամթերքի կուտակումն ու տեղափոխումը ներառող հանցակազմով հանցագործության մեջ, իսկ մենք հնարավորություն չունենք լսելու այդ պաշտոնական տեղեկատվության վերաբերյալ, հնարավոր է դա հերքող՝ նախագահի թեկնածուի կարծիքը, քանի որ դա կհակասի պաշտոնական տեղեկատվությանը, ուստի լրատվամիջոցներն այն չեն հրապարակում: Բացի դրանից, ՀՀ-ի այլ լրատվամիջոցներ հաղորդել եւ հաղորդում են այս շարքից բազմաթիվ այլ օրինակներ՝ առանց հերքելու կամ այլապես պատասխանելու հնարավորության:

Փաստորեն ստացվում է, որ այս ամենը, այդ թվում ՀՀ առաջին նախագահի եւ նախագահի թեկնածուի արժանապատվության վիրավորումը կատարվում է «պետական մարմինների պաշտոնական տեղեկատվության սահմաններում», այսինքն՝ դա է պաշտոնական տեղեկատվությունը, հակառակ դեպքում այն չէր կարող հեռարձակվել:

Միեւնույն ժամանակ, եթերով թողարկվում, իսկ ինտերնետային թերթերում, որոնք չեն փակվել, գրվում է այն մասին, որ 2008թ. մարտի 1-ի եւ լույս 2-ի գիշերը տեղի ունեցած հրկիզումները, հրաձգությունը եւ այլ անկարգությունները Լեւոն Տեր-Պետրոսյանի նախաձեռնած հանրահավաքի մասնակիցներն են իրականացրել, այսինքն՝ դա է պաշտոնական տեղեկատվությունը, հետեւաբար հանրահավաքի կազմակերպիչներն ու մասնակիցները զրկված են այդ պաշտոնական տեղեկատվությունը հերքող, այսինքն՝ դրան հակադրվող այլ տեսակետ հայտնելու, ապացույցներ ու փաստարկներ ներկայացնելու եւ այն ՁԼՄ-ներով տարածելու հնարավորությունից, այդ թվում այն մասին, որ, օրինակ, կատարվածը սադրանք ու այլ ուժերի կամ հատուկ ծառայությունների կողմից կառավարվող խուժանի գործողության արդյունք է եւ այլն (Ազատության հրապարակում նման բացահայտման մի դեպքի մասին լրատվամիջոցներով հաղորդվեց):

Նման պայմաններում վիճարկվող Հրամանագրով հասարակության լայն զանգվածներ զրկված են 2008թ. մարտի 1-ի եւ լույս 2-ի գիշերը տեղի ունեցած ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունից զատ այլ՝ համակողմանի տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, ինչով էլ խախտվում են վերը նշված սահմանադրական իրավունքները:

Փակվել են բազմաթիվ ինտերնետային թերթեր, որպիսիք են՝ www.a1plus.am, www.aravot.am, www.hzh.am, www.taregir.am, www.iragir.am, www.azatutyun.am եւ այլն, ինչով լայն հանրությունը զրկվել է պաշտոնականից բացի այլ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

Նշված ՁԼՄ-ներն ակնհայտորեն փակվել են գրաքննության արդյունքում, ինչն ուղղակի արգելված է:

Բազմաթիվ քաղաքացիներ ցանկություն ունեն ներքաղաքական հարցերի վերաբերյալ պաշտոնականից բացի ստանալ այլ տեղեկատվություն, համադրել դրանք եւ որոշել, թե որն է ճշմարտությունը:

Ելնելով վերը նշվածից եւ ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3 հոդվածով ու 11-րդ Գլխի պահանջներով, հարուցվում է սույն միացյալ պահանջներով հայցը,

Խնդրում ենք՝

1. «Արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ նախագահի 2008թ. մարտի 1-ի Հրամանագրի 4-րդ կետի՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ ենթակետերը ճանաչել անվավեր:
2. Հրամանագրի 4-րդ կետի՝ 6-րդ եւ 7-րդ կետերը ճանաչել ոչ իրավաչափ:

3. ՀՀ ոստիկանությանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը եւ ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցնել ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնցով արգելվում կամ խոչընդոտվում է «Հայկական ժամանակ», «Առավոտ», «Զորորդո իշխանություն», «Հայք», «Ժամանակ երեւան», «Հրապարակ», «Տարեգիր» թերթերի թողարկումը, ինչպես նաեւ www.a1plus.am, www.aravot.am, www.hzh.am, www.taregir.am, www.lragir.am, www.azatutyun.am վեբ-կայքերի արգելափակումը:

Վիճարկվող իրավական ակտը մեր կողմից վերադասության կարգով չի բողոքարկվել՝ վերադաս չլինելու պատճառով:

**Միջնորդություն
Հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին**

Հաշվի առնելով այն, որ հայցի ապահովման միջոցներ չձեռնարկվելու դեպքում մեր սահմանադրական իրավունքների սահմանափակումներն ու դրանց իրականացման արգելումները կշարունակվեն, ինչի արդյունքում կդժվարանա, իսկ գործի քննությունը 20 օրից երկար տևելու դեպքում ընդհանրապես անհնար կդառնա վճռի կատարումը, ուստի ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88 հոդվածով ու ՀՀ քաղ. դատ. օր-ի 97 հոդվածով ու եւ 98 հոդվածի 1-ին կետի 2-րդ եւ 3-րդ ենթակետերով,

Միջնորդում ենք՝

- ◆ Կիրառել հայցի ապահովման միջոցներ, այն է՝
 - արգելել ՀՀ նախագահին՝ մեր սահմանադրական իրավունքների նոր սահմանափակումներ եւ արգելումներ սահմանելը,
 - արգելել ՀՀ կառավարությանը՝ վիճարկվող Հրամանագրի իրականացումն ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումը,
 - արգելել ՀՀ պաշտպանության նախարարությանն ու ՀՀ ոստիկանությանը՝ ապահովել արտակարգ դրության անհրաժեշտ ռեժիմը, այդ թվում նրանց արգելել ՁԼՍ-ներում գրաքննության իրականացումը, ինտերնետային թերթերի արգելափակումը, օրենքով սահմանված կարգով խաղաղ ցույցերի, հավաքների, ժողովների, հանրահավաքների մասնակցող անձանց նկատմամբ զենք գործադրելը, նրանց վրա հրազենից կրակ բացելը, հատուկ այլ միջոցների օգտագործումը, զինված բանակայինների կողմից երեւանի փողոցներում իրականացվող շրջայցերը եւ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու համար ցանկացած այլ գործողություն կատարելը:
- ◆ Նկատի ունենալով հարցի հրատապությունը, ինչպես նաեւ այն, որ ընդհանուր ժամկետներում քննվելու դեպքում գործի քննությունը հիմնականում կկորցնի իմաստը, խնդրում ենք շտապ նշանակել գործի քննությունը, կիրառել արագացված դատաքննություն:

**Միջնորդություն
ապացույցներ թույլատրելու վերաբերյալ**

Ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, միջնորդում ենք թույլատրել հետեւյալ ապացույցները.

1. DVD սկավառակը.

Նշված ապացույցի մեջ պարունակվում են 01.03.2008թ. տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունները, որի միջոցով մենք ցանկանում ենք հիմնավորել, որ Հրամանագրի ընդունման ժամանակ գոյություն ունեցող իրավիճակը չի կարող գնահատվել որպես ազգի կյանքին սպառնացող:

2. «Զորորդո իշխանություն» թերթի նամակը՝ 1 էջ, web.am ինտերնետ պորտալից հայտարարությունը՝ 1 էջ, վեբ-կայքերի արգելափակման վերաբերյալ արտատպված տեղեկանքները՝ 8 էջ, մի շարք ՁԼՍ-ի կողմից տարածված հայտարարությունը InfoArmenia.org վեբ-կայքից արտատպված 1 էջ, ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացույցի հայտարարությունը 1 էջ, «Հայկական ժամանակ» թերթի կողմից տրված տեղեկանքը՝ 1 էջ, «Զորորդո իշխանություն» թերթի կողմից տրված տեղեկանքը՝ 1 էջ, «Հայք» թերթի կողմից տրված տեղեկանքը՝ 2 էջ:

Նշված ապացույցով մենք ցանկանում ենք հիմնավորել գոյություն ունեցող սահմանափակումների առկայությունը եւ սահմանափակումների անհամաչափությունը:

3. Թույլատրել հրավիրել որպես վկա հետևյալ անձանց՝

«Հրապարակ» օրաթերթ
Գլխավոր խմբագիր՝ Արմինե Օհանյան
Հասցե՝ Երեւան, Տիգրան Մեծի 18/4
Հեռախոս՝ 010 52 95 94

«Չորրորդ իշխանություն» թերթ
տնօրեն՝ Սիեր Ղալեչյան
Հասցե՝ Երեւան, Նալբանդյան 50
Հեռախոս՝ 010 52 02 12

«Հայկական ժամանակ» օրաթերթ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Հայկ Գեւորգյան
Հասցե՝ Երեւան, Իսրայելյան 37
Հեռախոս՝ 010 58 11 75

«Ժամանակ Երեւան» օրաթերթ
խմբագրման պատասխանատու՝ Այդին Մորիկայն
Հասցե՝ Երեւան, Աբովյան 25/7
Հեռախոս՝ 010 58 05 93

«Հայք» օրաթերթ
Գլխավոր խմբագիր՝ Վասակ Դարբինյան
Հասցե՝ Երեւան, Սարյան 38
Հեռախոս՝ 010 53 50 27

«Տարեգիր» թերթ
Գլխավոր խմբագիր՝ Վասակ Դարբինյան
Հասցե՝ Երեւան, Տիգրան Մեծի 29/20
Հեռախոս՝ 010 54 12 57

«Առավոտ» օրաթերթ
Գլխավոր խմբագիր՝ Արամ Աբրահամյան
Հասցե՝ Երեւան, Արշակունյաց պողոտա 2, 15 հարկ
Հեռախոս՝ 010 58 64 29

Կից ներկայացնում ենք՝

1. Պետ. տուրքի անդորրագիրը
2. DVD սկավառակ
3. «Չորրորդ իշխանություն» թերթի նամակը՝ 1 էջ, web.am ինտերնետ պրովայդերի հայտարարությունը՝ 1 էջ, վեբ-կայքերի արգելափակման վերաբերյալ արտատպված տեղեկանքները՝ 8 էջ, մի շարք ՁԼՄ-ի կողմից տարածված հայտարարությունը InfoArmenia.org վեբ-կայքից արտատպված՝ 1 էջ, ԵԱՀԿ մամուլի ազատության հարցերով ներկայացուցչի հայտարարությունը՝ 1 էջ, «Հայկական ժամանակ» թերթի կողմից տրված տեղեկանքը՝ 1 էջ, «Չորրորդ իշխանություն» թերթի կողմից տրված տեղեկանքը՝ 1 էջ, «Հայք» թերթի կողմից տրված տեղեկանքը՝ 2 էջ
4. Գրանցման վկայականի պատճենը
5. Հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները պատասխանողների կողմից ստանալը հավաստող փաստաթղթեր
6. Լիազորագրի օրինակը:

«Ժառանգություն» կուսակցության նախագահ Րաֆֆի Կ. Հովհաննիսյանի
լիազորված անձ՝ Ջարուհի Փոստանջյան